

Այդ յուշարարութիւնը մեզի համար կրկնապէս նշանակալից և նուիրական է անտարակոյս հոս, հեռաւորութեանը մէջ որ զմեզ կ'ըսեմէ մեր բնաշխարհիկ Հայրենիքէն և այն բոլոր կենդանի ազգեցութիւններէն, որոնք, հոն, միջավայրի պայմաններուն հասկնալի ներգործութեամբը, ուղղակի կ'իջնեն Հայութեան հոգւոյն մէջ:

Նշանանակալից՝ անով որ ամէն օր մեր ազգային զգացումին մէջ կը վերանորոգէ հին բայց չ'մոռցուելիք և ճշմարիտ արժէքներու գիտակցութիւնը, տեսա՛յ մը ներքին ոյժ օտարացումի վտանգներուն դէմ: Ու նուիրական՝ այն պատճառաւ որ մեզի կ'հաղորդէ պատգամը բարի և իմաստուն անցեալի մը. այս բարեցակամ միջավայրին մէջ ապրիլ իբրեւ պատուաւոր սերունդը տոռապած բայց ազնուական ցեղի մը, երէկի մեր նախնիքներէն մեզի վաստկցուած խաղաղ՝ ժիր և պարկեշտ հասարակութեան մը մեր համբաւին հանդէպ գորգուրալից:

